ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. սեպտեմբերի 11-15-ը ք. Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Ստեփան Մնացականյան, ՀՀ Վիճակագրական կոմիտեի (Արմստատ) նախագահ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

ք. Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն), 2023թ. սեպտեմբերի 11-15-ը

3. **Հրավիրող կողմը.**

ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե

4. **Գործուղման նպատակը**

Մասնակցել Վիճակագրության արտադրողների և սպառողների միջազգային ֆորումին: Ֆորումի հիմնական նպատակն էր՝ վիճակագրության արտադրողների և սպառողների միջև երկխոսության ապահովումը՝ վիճակագրական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու և վիճակագրության սպառողների ժամանակակից կարիքները լիարժեք բավարարելու համար:

2023թ. սեպտեմբերի 12-ին մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստին: Նիստի հիմնական նպատակն էր՝ քննարկել ԱՊՀ տարածաշրջանի ազգային վիճակագրական ծառայությունների առջև ծառացած խնդիրները և մարտահրավերները, հետագա զարգացման հեռանկարները և գործողությունները:

5. **Քննարկված թեմաները.**

Ֆորումի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. Արտադրողներ՝ վիճակագրության մեթոդաբանությունը և կազմակերպումը. վիճակագրական արտադրության կատարելագործում՝ վիճակագրական

արտադրության կառավարում, տվյալների կառավարում, մեծ տվյալների և այլընտրանքային տվյալների աղբյուրների հնարավորություններ,

2. Արտադրողներ՝ վիճակագրական տեխնոլոգիա. վիճակագրական թվային էկոհամակարգեր և ծառայություններ. ներկայիս իրավիճակ և զարգացման հիմնական ուղղություններ,
3. Վիճակագրության սպառողներ. ժամանակակից վիճակագրությունը սպառողի տեսանկյունից՝ իրավիճակի գնահատում և զարգացման համար անհրաժեշտ ուղղություններ,
4. Վիճակագրության մարդկային ներուժ. վիճակագրության մարդկային ներուժի զարգացում՝ վիճակագրական կրթություն, վիճակագրական համայնքի ձևավորում:

ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստին քննարկվեցին հետևյալ հարցերը.

1. «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի իրականացման աշխատանքների ընթացքը,
2. «Անկախ պետությունների համագործակցության վիճակագրության զարգացում» ծրագրի 2024-2025 թթ. աշխատանքային պլանը,
3. Արժույթների գնողունակության համարժեքության հիման վրա միջազգային համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ տարածաշրջանում անցումը ՀՆԱ-ի տարեկան համադրումներին,
4. ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 68-րդ նիստը,
5. ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստի կոմյունիկեն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ֆորումին բացման խոսքով հանդես եկան ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի նախագահ Կ. Լայկամը, ԱՊՀ գլխավոր քարտուղարի տեղակալ Դ. Տրեֆիլովը, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի քարտուղարության ղեկավար, գլխավոր քարտուղար Դ. Կոբիցկին, Սանկտ-Պետերբուրգի փոխքաղաքապետ Ա. Կարաբելնիկովը, Ռուսատանի Դաշնության (ՌԴ) նախագահի Հյուսիսարևմտյան դաշնային շրջանում լիազոր ներկայացուցիչ Ա. Գուցանը և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի տնօրեն Ս. Շվայնիֆեստը:

Ֆորումի ընթացքում ներկայացվեցին նախատեսված թեմաներով շնորհանդեսներ և զեկույցներ:

Հայաստանը հանդես եկավ «Պաշտոնական վիճակագրության մարտահրավերները: Լուծումների որոնումը սպառողների հետ երկխոսության միջոցով» զեկույցով:

Զեկույցներից և շնորհանդեսներից հետո հնչեցին հարցեր և տրվեցին պատասխաններ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ֆորումին մասնակցում էին վիճակագիրներ, պետական մարմինների և գիտական համայնքի ներկայացուցիչներ ԱՊՀ մասնակից բոլոր երկրներից, Սերբիայի Հանրապետությունից, Լաոսի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետությունից, Մեքսիկայի Միացյալ Նահանգներից և Կորեայի Հանրապետությունից: Որոշվեց հնարավորինս սերտացնել արտադրող-սպառող համագործակցությունը և առանձնահատուկ ուշադրություն դարձնել վիճակագրության ոլորտում կրթության համակարգի զարգացմանը:

ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստի ընթացքում ստորագրվեցին հետևյալ որոշումները.

- «ԱՊՀ վիճակագրության զարգացում» ծրագրի իրականացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ,
- «Անկախ պետությունների համագործակցության վիճակագրության զարգացում» ծրագրի աշխատանքային 2024-2025 թթ. պլանի վերաբերյալ,
- Արժույթների գնողունակության համարժեքության հիման վրա միջազգային համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ տարածաշրջանում ՀՆԱ-ի տարեկան համադրումներին անցնելու վերաբերյալ,
- Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 68-րդ նիստի վերաբերյալ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Մասնակցությունը միջազգային ֆորումին և ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստին

հնարավորություն ընձեռեց քննարկել արտադրող-սպառող համագործակցության, սպառողների կարիքները բավարարելու գործողությունների, մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ հարցերը, ներկայացնելու Արմստատի առաջարկները քննարկվող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև քննարկել ԱՊՀ տարածաշրջանի ազգային վիճակագրական ծառայությունների առջև ծառացած խնդիրները և մարտահրավերները, հետագա զարգացման հեռանկարները և գործողությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան

19.09.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը- ՀՀ Վարչապետի 21.08.2023թ. N 857-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը- Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ)

5. Գործուղման ժամկետները՝ 11-15 սեպտեմբերի 2023թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը- ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտե

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

Ճանապարհածախս և գիշերավարձ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն 1	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)

Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյան

18.09.2023թ.